Ք. ԵՐԵՎԱՆ

# ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԵՐԳՉԱԽՄԲԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(Ի - IV դասարաններ)

ՏՆՕՐԵՆ՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՓՈԽՏՆՕՐԵՆ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՍ.-ՈՒՀԻ՝ Մ. ՆԱՋԱՐՅԱՆ

2023-2024 ՈՒՍ. ՏԱՐԻ

# Բացատրագիր

## Երգչախմբի տարեկան ծրագիր

### Մանկական երգչախմբի խնդիրներն ու նշանակությունը

Երեխաներին երաժշտարվեստի հետ ծանոթացնելու, այն հասկանալի ու մատչելի դարձնելու լավագույն եղանակը խմբերգային երգեցողությունն է: Մանկական երգչախմբի ու նրա ղեկավարի հիմնական նպատակն է խմբերգային երգեցողություն սովորեցնելը և երեխաների մեջ երաժշտության նկատմամբ սեր արթնացնելն է:

Երգչախմբի աշխատանքների ընթացքում իրականացվում են մի շարք կարևոր հասարակական, քաղաքական և դաստիարակչական խնդիրներ: Երգը նպաստում է խորացնելու և իմաստավորելու երեխաների սերը հայրենիքի, իր ժողովրդի ու ազգի նկատմամբ: Երգը դրվատում է հարազատ բնաշխարհի գեղեցկությունը, հայրենասիրությունը և ընկերասիրությունը:

Ընդհանուր նպատակներն ու խնդիրները.

- ձևավորել և զարգացնել խմբովի միաձայն, երկձայն և եռաձայն երգեցողության կարողություններն ու հմտությունները
- երեխայի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային երաժշտությունը, չբացառելով նաև այլ ժողովուրդների և դասական կոմպոզիտորների ստեղծագործությունները
- պահպանել և զարգացնել մանկական երգչային ձայնը
- երեխաների համախմբում համակիրների ու բարեկամների համերաշխ կոլեկտիվում

Ակնկալվող վերջնարդյունքները

Ծրագրի ավարտին աշակերտը կկարողանա՝

- Երգել /մենակ և խմբով/ մանկական, ժողովրդական , դասական տարբեր ոճի երգեր, խմբերգեր և կոմպոզիտորական երգեր՝ ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին:
- Կարժևորի հայ ազգային և դասական կոմպոզիտորների երաժշտությունը, կդառնա նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը:

Երգչախմբի թեմատիկ պլանավորում
(շաբաթական 2 ժամ, տարեկան 68 ժամ )

| | Թեմա- Հայ կոմպոզիտորական երգեր (40 ժամ) | | ժամ |
|---|---|---|---|
| Նպատակ | | • Զարգացնել երաժշտական «լեզվի» տարրերը ընկալելու կարողությունը:<br>• Զարգացնել երկձայն երգերը արտահայտիչ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով ու առոգանությամբ կատարելու կարողությունը, որոշակի ձայնավարժությունների և երգերի կատարման միջոցով:<br>• Կատարելագործել երկձայն և բազմաձայն ռիթմական նվագակցություններ կատարելու կարողությունը:<br>• Զարգացնել սեքստա, սեպտիմա, օկտավա ինտերվալները ճանաչելու և մաքուր ինտոնացիայով երգելու կարողությունը: | |
| Վերջնարդյունքներ | | • Պատկերացնել երաժշտության դերն ու նշանակությունը առօրյա կյանքում:<br>• Կարողանա մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով ու առոգանությամբ կատարել | |
| 1 | «Օրհներգ»<br>«Հայրապետական մաղթանք» | Երաժշտությունը՝ Բ" Կանաչյանի<br>Կոմիտաս | 4 |
| 2 | «Էրեբունի Երևան»<br>«Ձա՛ն, Հայաստան» | Է. Հովհաննիսյան<br>Մ.Մավիսակալյան | 4 |
| 3 | «Նոր Հայաստան» | Ա. Լուսինյան | 4 |
| 4 | «Ազգ իմ փառապանծ» և այլ ստ.-ներ | Ա. Բաբաջանյան | 4 |
| 5 | « Առավոտ Լուսո»<br>«Հայր մեր» | Ներսես Շնորհալի<br>Մ.Եկմալյան | 4 |
| 6 | « Լեպհո, լե՛,լե՛»<br>«Հո՛յ, Նազան» | Կ. Մուրզա | 4 |
| 7 | « Նուբար-Նուբար»,«Հո՛յ, իմ նազանի յարը», «Մարալ-մարալ» և այլ ստ.-ներ | Ժող. երգերի մշակումներ | 4 |
| 8 | Ժամանակակից ստեղծագործողների երգեր | | 4 |

| | | | |
|---|---|---|---|
| 9 | Երգշարեր<br>Ծիսական երգեր | | 4 |
| 10 | Դպրոցի միջոցառումների համար նախատեսվող երգեր | | 4 |
| | Թեմա- | Կոմիտասյան մշակումներ (28 ժամ) | ժամ |

| | |
|---|---|
| Նպատակ | • Ծանոթացում Կոմիտասյան երգերի դերը հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ<br>• Դասական երաժշտության մեջ երաժշտական կերպարի ընկալման կարողությունների զարգացում,<br>• Մարդու զգայարանների վրա երաժշտական կերպարի ազդեցության արժևորում:<br>• Բարձրացնել գեղագիտակ ճաշակը կոմիտասյան խմբերգերի նկատմամբ<br>• Արթնացնել սեր ազգային արժեքների նկատմամբ |
| Վերջնարդյունքներ | • Պատկերացնի կերպարի դերն ու նշանակությունը երաժշտության մեջ,<br>• Կարողանա ճիշտ կատարել հնչած ստեղծագործությունները |

| | | | |
|---|---|---|---|
| 11 | «Կաքավիկ»<br>«Քելե, քելե» | Կոմիտաս | 6 |
| 12 | «Անձրևն եկավ»<br>«Երկինքն ամպել է» | Կոմիտաս | 4 |
| 13 | Երգշարեր | Կոմիտաս | 4 |
| 14 | «Զար, զընգը »<br>«Էսօր ուրբաթ է» | Կոմիտաս | 4 |
| 15 | Ժող. երգերի ժամանակակից մշակումներ | Կոմիտաս | 6 |
| 16 | Տարեվերջյան համերգ | Կոմիտաս | 4 |

# Վերջնարդյունք

Վերջնարդյունքում կունենանք երգեցիկ երգչախումբ ,որը էլ ավելի կգեղեցկացնի եվ կլրացնի մեր միջոցառումների ցանկը:Աշակերտները ծանոթ կլինեն մի շարք հայ եվ եվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններին:Եվ իհարկե կգնահատեն լավ եվ որակյալ երաժշտությունը,քանի որ երաժշտությունը ազգություն չի ճանաչում:

**5. Գրականություն**

1. Դասագիրք 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ դասարանների երաժշտություն

2. Հայ կոմպոզիտորներ մանկական երգեր՝ - կազմող Ս.Բաբաթորոսյան, Հայ պատանյաց ձայնը /երգարան/

3. մուլտիմեդիաներ

4. В. Соколов. Школа хорового пения. 1987г.

5. Л.М.Жарова Начальный этап обучения хорового пению. 2011г.